ՀԱՅԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ XV–XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Վ. Կ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայերի Մոսկվայում լինելու մասին առաջին հիշատակությունները վերաբերում են XIV դ. երկրորդ կեսին։ Ռուս տարեգիրը հաղորդում է, որ Նիժնի-Նովգորոդում հավաքված առաջին (1366 թ.) տոնավաճառին մասնակցելու եկած հայ առևտրականները, ինչպես և արևելյան այլ վաճառականներ, թալանվել են Մեծ Նովգորոդից Վոլգայով դեպի Մոսկվա և Նիժնի-Նովգորոդ տանող ճանապարհի վրա գործող ուշկույնների ավազակախմբի կողմից[1]։

Հավանաբար հայերը Նիժնի-Նովգորոդից Մոսկվայի վրայով գնում-հասնում էին մինչև Մեծ Նովգորոդ, անխուսափելիորեն հանդիպանելով Մոսկվայում, որը XIV դ. կեսերին մեծ իշխանության կենտրոն էր։ Թաթարների դեմ Մոսկվայի Մեծ իշխան Դմիտրի Դոնսկոյի մղած նշանավոր Կուլիկովյան ճակատամարտում զոհվածների թվում տարեգրությունը հիշատակում է «Անդրեյ Սերկիզովի» և «Սիմեոն Մելիքովի» անունները[2] *(ընդ որում, Մելիքովը առաջինն էր հաղորդել Մամայ իշխանի թաթարական հորդայի՝ Մոսկվայի վրա հարձակման գնալու լուրը)։ Արդեն XIV դ. Մոսկվայում բնակվում են հայեր։ 1390 թ. հուլիսին Մոսկվայում բռնկված հրդեհը սկսվել էր հայազգի Աբրամի տնից, ոչնչացնելով մի քանի հազար շենքեր Պոսադում՝ առևտրա-արհեստագործական թաղամասում*[3]։ *Ինչպես նկատել է ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը, մոսկովյան առևտրական գործարքներում կարևոր տեղ ունեին հայ վաճառականները, որոնք Հովհաննես Կարապետի տոնին արևելյան այլ վաճառականների հետ մասնակցում էին Կաղանի տոնավաճառներին, գալիս ու գնում էին Մոսկվա, հաճախ երկարատև կամ մշտական բնակություն հաստատելով այնտեղ։ Նա այդ փաստերը բացատրում է Մոսկվայի բնակչության մեջ նկատելի հայկական տարրի առկայությամբ և գտնում է, որ հայ գաղութը մայրաքաղաքում հիմնադրվել է XV դարում*[4]։ *Հայերի դերին նույնպիսի գնահատական է տալիս ակադ. Գրեկովը և շեշտում, որ հայերը Մոսկվա էին գալիս Ցարգրադից ու Ղրիմից*[5]։

Ոսկե Հորդայից դեսպանների հետ Մոսկվա էին գալիս հազարավոր վաճառականներ։ Միայն մի դեսպանության հետ եկածների թիվը հասնում էր 3200-ի[6], *որոնց մեջ զգալի թիվ էին կազմում հայերը։ Ղրիմից հայերը Մոսկվա*

---

[1] Полное собрание русских летописей *(այսուհետև՝* ПСРЛ), *հատ. XXV, Մոսկվա, 1949, էջ 183։*

[2] *Նույն տեղում, հատ. IV, էջ 81, 204։ Տե՛ս նաև հատ. VI, էջ 96—97։*

[3] *Նույն տեղում, էջ 218։*

[4] М. Н. Тихомиров, Древняя Москва, М., 1947, *էջ 98—99, 142—143։*

[5] Б. Д. Греков, Крестьяне на Руси, М., 1947, *էջ 98—99, 142—143։*

[6] С. М. Соловьев, История России, кн. I, СПб., 1862, *էջ 1535։*

լին տանում ձիեր և արևելյան ապրանքներ, որոնց կարիքը մեծանում էր մոսկովյան արքունիքում հատկապես XV դ. երկրորդ կեսին։ Իվան III ցարը իր առևտրական գործակալի՝ հայազգի խոջա Կակոսի միջոցով կապ էր հաստատել Կաֆայի հետ[7]։

Մոսկովյան մեծ իշխան Իվան III-ը (1462—1505 թթ.) հաջողությամբ միավորեց Կենտրոնական Ռուսաստանի իշխանությունները և իրավամբ իրեն հայտարարեց «Համայն Ռուսիայի մեծ իշխան»։ Ֆ. Էնգելսը նշում է այն կարևոր հանգամանքը, որ «ուղղափառ իշխանների հպատակեցումը զուգորդվում էր թաթարական լծից ազատագրվելու հետ և վերջնականապես ամրացվեց Իվան III-ի կողմից»[8]։ Այդ հաջողություններին Իվան III-ը հասավ խելացի ներքին քաղաքականության ու դիվանագիտական մեծ ջանքերի շնորհիվ։ Նա կարողացավ հաջող արշավանքով 1469 թ. իրեն ենթարկել Կազանի թաթարական խանին[9], բարելավեց հարաբերությունները եվրոպական պետությունների ու Վատիկանի հետ, կապեր հաստատեց Ռուսիայի և Մերձավոր Արևելքի ու Անդրկովկասի իշխանությունների միջև։ Հռոմի Պողոս II պապի կողմից լիազորված Բուրգունդիայի դեսպան Լյուդովիկ Բոլոնսկին և ռուսական պետության կողմից Անդրկովկաս ուղարկված Մարկո Ռոսսն եղան նաև Թավրիզում, որտեղ հանդիպեցին Կոնտարինիի հետ և 1475 թ. միասին գնացին Ֆասո (Փոթի՝ Վրաստանում)։ Հռոմի պապն ու Եվրոպայի պետություններն ուզում էին Ռուսաստանի միջոցով խաչակրաց արշավանք կազմակերպել օրըստօրե հզորացող ագրեսիվ Թուրքիայի դեմ։ Սակայն Իվան III-ը պետք է նախ ազատվեր թաթարական գերիշխանությունից, որը զգալիորեն թուլացել էր, բայց չէր վերացել։ 1480 թ. Մեծ Հորդայի Ահմատ խանը իր զորքերով մոտեցավ Մոսկվայի մատույցներին, կանգնեց ռուս զորքերի հանդիման՝ Ուգրա գետի ափին, բայց չհամարձակվեց կռիվ սկսել և ետ նահանջեց՝ փաստորեն օրինականացնելով թաթարական տիրապետության վերացումն ու մոսկովյան իշխանության անկախությունը։ Այս բախտորոշ իրադարձությունը մեծապես նպաստեց Ռուսաստանի հզորացմանը։ Ինչպես նկատել է Մարքսը, դրանից հետո «մենք Իվան III-ին տեսնում ենք միանգամայն անկախ գահի վրա նստած։ Նրա կողքին՝ բյուզանդական վերջին կայսեր դուստրը։ Ոսկե Հորդայի բեկորները ժողովվել են նրա արքունիքի շուրջը... Լիվոնյան ասպետները ջախջախված են... Զարմացած Եվրոպան, որ Իվան III-ի թագավորության սկզբում նույնիսկ հազիվ էր նկատում Մոսկովիայի գոյությունը, շշմել էր իր արևելյան սահմաններին վրա հսկայական պետության հանկարծակի հանդես գալուց. և ինքը՝ սուլթան Բայազեթը, որի առաջ դողդողում էր Եվրոպան, առաջին անգամ լսեց Մոսկովիտի գոռոզամիտ ճառերը»[10]։ Եթե Մոսկովիայի հզորացումը այդպիսի ուժեղ տպավորություն էր գործել աշխարհի հզորների վրա, ապա պարզ է, թե ինչքան մեծ էր դրա նշանակությունը իրենց անկախությունը կորցրած և թուրքական նվաճումների նախադռանը գտնվող փոքր ժողովուրդների համար։

Թաթարական լծի տապալումից անմիջապես հետո Իվան III-ի մոտ են գալիս վրացական թագավոր Ալեքսանդրի դեսպանները՝ Նարիմանը, Դեմիյա-

---

7 Տե՛ս «Очерки истории СССР (конец XV в., начало XVII в.)», М., 1955, էջ 89։
8 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. I, էջ 450։
9 ПСРЛ, т. VI, էջ 189։
10 Տե՛ս «История дипломатии», հատ. I, М., 1941, էջ 197։

նը և Խոդի-Մարումը (վերջինը հավանաբար հայազգի խոջա Միրաքն էր, որ շատ լավ փոխհարաբերությունների մեջ էր վրացական շրջանների հետ և կատարել էր դիվանագիտական բանագնացություններ Եվրոպայում)[11]։ Վրաց իշխանն ընդգծում էր երկրի ծանր վիճակը և խնդրում օգնություն ու հովանավորություն[12]։

Ինչպես գրում է պրոֆ. Բազիլևիչը, ռուս-վրացական (մենք կասեինք նաև ռուս-հայկական) կապերն այդ ժամանակ արդեն «նշանակալիորեն ավելի ընդարձակ են եղել, քան թե ներկայացվում է սահմանափակ աղբյուրների հաղորդումով»[13]։

Պոլսի անկումից հետո հունադավան ժողովուրդները բնականաբար իրենց հայացքը պետք է հառեին նոր բարձրացող հզոր Մոսկովյան պետությանը[14], որից պետք էր օգնություն հայցել։ Մոսկվան XV դարի վերջերին և XVI դ. սկզբներին արդեն դարձել էր աշխարհի հետ կապված խոշոր առևտրա-արդյունաբերական կենտրոն։

Հայերի շփումները Մոսկվայի հետ եղակի ու պատահական չէին։

Եթե Բյուզանդական կայսրության անկման ու թուրքերի կողմից Պոլսի գրավման ժամանակակից ու ականատես Աբրահամ Անկյուրացին երազում էր, որ «հռոմայացոց» միջոցով անհավատ «հագարացոց» ձեռքից ազատվի «Սուրբ Սոփի» տաճարը[15], ապա նրա անհայտ ժամանակակիցը իր «Թագուհի մի տեսա» սկզբնատողով պոեմում Թուրքական տիրապետությունից Պոլսի ազատագրության մեջ արդեն նշմարում է Մոսկվայի դերը[16]։ Ուշագրավ է այն, որ պահպանվել են այդ պոեմի տասներկու տարբերակներ՝ փաստ, որ վկայում է XV—XVII դդ. Մոսկվային տրվող նշանակության մասին։ Ինչպես ճիշտ կռահել է Աս. Մնացականյանը, Մոսկվայի իշխանի և նրա Թագուհու մասին գրված այդ պոեմի հեղինակը նկատի ունի Իվան III-ի և Բյուզանդիայի վերջին կայսր Կոստանդինի եղբոր դուստր Սոֆիայի ամուսնության քաղաքական նկատառումները, երբ Պալեոլոգները և Հռոմի պապը հույս ունեին Ռուսաստանի օգնությամբ ազատագրել Կոստանդնուպոլիսը[17]։ Այսպես, XV դ. հայ հեղինակը լավ գիտի Մոսկվայում կատարված դեպքերը՝ Իվանի ամուսնությունը Սոֆիայի հետ.

---

11 Տե՛ս К. В. Базилевич, Внешняя политика русского централизованного государства, М., 1952, էջ 409—414։ Տե՛ս նաև «Труды объед. научной сессии по общ. наукам», Баку, 1957, էջ 288—292։

12 Ալեքսանդրը Իվան III-ին գրում էր. «Темным еси свет, зеленного неба звезда еси... всем князем вышний князь, земли еси тишина», А. Цагарели, Сношения России с Кавказом в XVI—XVII вв., СПб., 1891, էջ 8։

13 К. В. Базилевич, նշվ. աշխ., էջ 411։

14 Տե՛ս Н. С. Чаев, «Москва—Третий Рим» в политической практике..., «Исторические записки». т. XVII, М., 1945.

15 Տե՛ս Հ. Ս. Անասյան, Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957, էջ 29—30։

16 Տե՛ս Ա. Գ. Արրահամյան, Ռուս ժողովուրդը և Մոսկվան հայ մատենագրության մեջ, Երևանի պետական համալսարանի գիտ. «Աշխատություններ», հատ. XXVII, Երևան, 1948, էջ 209—235։ Տե՛ս նաև Ա. Մնացականյան, Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 3, էջ 50։

17 Տե՛ս Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 272, 565։

Հռոմի պապի միջամտությունն ու հակաթուրքական պայքարին Ռուսաստանին մասնակից դարձնելու ձգտումները։

Մոսկվայի հետ կապերի ստեղծմանը նպաստում էին ռուսահայ և այլ գաղթավայրերում բնակվող վաճառականների առևտրական ուղևորություններն ու հանդիպումները և զանազան երկրներից Մոսկվա գնացող հայազգի դիվանագետների բանագնացությունները։

Այսպես, 1482 թ. Մոսկվայում էր լեհական դեսպան հայազգի Բոդդանը, որին Իվան III-ը հանձնարարել էր իր հրովարտակը տանել Թամանի իշխանին։ Բոդդանը եղել էր նաև Ղրիմում, խանի մոտ, որը Մոսկվայի հետ դաշինքի մեջ էր և խոստացել էր Իվան III-ի «թշնամիներին թշնամի լինել, բարեկամներին՝ բարեկամ»[18]։

1495 թ. Մոսկվայից Ղրիմ են մեկնում վաճառականներ, որոնց թվում՝ հայ Սերկիզը իր «7 մարդկանցով»[19], 1495 թ. Մոսկվա ուղարկված Ղրիմի դեսպանության հետ էր խոզեյը, որ Մոսկվայում հիվանդացել էր։ Խանը Մոսկվա էր ուղարկել Կուլուին՝ «իր ընկերոջը» (որը խոզեյի եղբայրն էր և 5 տարի Մոսկվայում էր)։ Հիվանդին բերելու համար Մոսկվա էր մեկնել նաև մի այլ խոջա՝ Լյուտին։ Հիշատակվում է, որ Մոսկվայում են կաֆայեցի Բոգոսը, Ալաեոզը, Լյուտվին և այլ հայեր։

1501 թ. Լիտվայի իշխան (ապա Լեհաստանի թագավոր) Ալեքսանդրը (1492—1506 թթ.) իր սուրհանդակ հայազգի Սալթանի միջոցով հաշտության առաջարկ է ուղարկում Իվան III-ին[20]։

XVI դ. հայերի առևտրական այցերը Մոսկվա ավելի հաճախակի են դառնում։ 1516 թ. ռուս դեսպանի հետ Թուրքիայից Մոսկվա են գնում հայեր[21]։

Այսպես, հայերը հաճախակի լինում էին Մոսկվայում, ապրում ամիսներ ու տարիներ, կատարելով առևտրա-տնտեսական և դիվանագիտական-քաղաքական գործարքներ։ Բայց սրանով չէր սպառվում հայերի կապը Մոսկվայի հետ և Մոսկվայի նշանակությունը հայերի ու Հայաստանի համար։ XVI դ. վերջերից ու XVII դարում Հայաստանի ու Անդրկովկասի ազատագրության հարցը ավելի ու ավելի հաճախ էր արծարծվում ռուսական արքունիքում։ 1518 թ. Հռոմի պապի ու Մաքսիմիլիան կայսեր կողմից Մոսկվա եկած Ֆրանցիսկ և Անտոնիո դեսպանները Ռուսաստանին առաջարկում էին պատերազմ հայտարարել Թուրքիային, որ նվաճել է Իբերիան, Ալբանիան ու Մեծ Հայքը[22]։ Պապը կոչ էր անում Վասիլի III-ին «պաշտպան կանգնել իր հայրենիք Կոստանդնուպոլսին», «ընդհանուր քրիստոնեական բարօրության համար»։

1547 թ. հրավիրվում է էջմիածնի պաղտճի ժողովը, որի նախաձեռնող Ստեփանոս կաթողիկոսը մեկնեց Լեհաստան և եղավ Մոսկվայում[23]։

Մոսկվայի դերը հայերի կյանքում ավելի ակնբախ դարձավ, երբ Իվան Ահեղի օրոք (1547—1584 թթ.) Ռուսաստանը նվաճեց Կազանի ու Աստրախանի խանությունները և դարձավ Անդրկովկասի անմիջական հզոր հարևանը։

---

18 Տե՛ս «Сборник Русского исторического общества» (РИО), т. 41. էջ 32—33 և 73։

19 Նույն տեղում, էջ 230։

20 Նույն տեղում, էջ 359—361։ Ընդ որում նշվում է, որ հայը կիևցի է («киянин»)։

21 Նույն տեղում, հ. 95, էջ 236։

22 А. Цагарели, նշվ. աշխ., էջ 9։

23 «Очерки истории СССР (конец XV, начало XVII вв.), էջ 850։

Պահպանվել են հիշատակություններ այն մասին, որ 1552 թ. Կազանում կային հայ վաճառականներ և թնդանոթաձիգներ[24], որ Կազանից հաղթանակով վերադարձած ռուս զորքին ու ցարին Մոսկվայում ռուսների հետ դիմավորել են նաև բազմաթիվ հայեր[25]։

Կազանի ու Աստրախանի նվաճումը լայն հեռանկարներ էր ստեղծում Իվան IV-ի արևելյան քաղաքականության համար։

Ի նշանավորումն թաթարների դեմ տարած հաղթանակի և Կազանի խանությունը Ռուսաստանին միացնելու, Մոսկվայում 1552—1556 թթ. կառուցված «Պոկրովսկի» տաճարի (որ հետագայում անվանվեց նաև «Վասիլի Երանելու տաճար») 9 գմբեթներից մեկը կոչվեց Գրիգոր Լուսավորչի անունով։

Աստրախանի միացումը Ռուսաստանին ամրապնդեց Մոսկովյան պետության դիրքերը Կասպից ծովի հյուսիսային ափերին և հնարավորություն ստեղծեց անմիջական կապեր հաստատել Անդրկովկասի հետ։

Մոսկվայի հետ ունեցած կապերի ամրապնդմանն ու հայկական գաղութի աճին խանգարեցին գրեթե անընդմեջ թաթարական հարձակումները և 25-ամյա Լիվոնյան պատերազմը (1558—1583 թթ.)։ Սակայն անգամ այդ պայմաններում Իվան IV-ին դիմելու փորձեր են արվում՝ Ռուսաստանից օգնություն հայցելու և առևտրական կապեր հաստատելու համար։

Դեռևս 1553 թ. Իվան IV-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատելու առաջարկություն է անում Թահմազ I-ը։ 1563 թ. Շամախիից Աբդուլլա խանի դեսպանը գալիս է Մոսկվա ու խնդրում հովանավորություն, Աստրախանի հետ հայերի վաղեմի կապերի վերականգնում[26], առևտրական կապերի հաստատում։ Չնայած թշնամական փոխհարաբերություններին, ռուսները շարունակում էին իրենց առևտուրը Կաֆայում և Ազովում, իսկ Թուրքերը (նրանց հետ նաև հայերը)՝ Մոսկվայում[27]։

1563 թ. վրաց իշխանի հայ ներկայացուցիչը անգլիացի Ջենկինսոնին խնդրում է Մոսկվայի ցարին հայտնել օգնություն հայցելու իրենց ցանկության մասին։ Ջենկինսոնը Իվան IV-ից ստանում է դրական պատասխան՝ օգնության պատրաստակամության վերաբերյալ[28]։

Բայց միայն Ֆեոդոր Իվանովիչ ցարի օրոք (1584—1596 թթ.) Մոսկվան պաշտոնապես հայտարարվեց Վրաստանի հովանավորն ու տիրակալը։ Քանի որ Թուրքիան նվաճել էր Անդրկովկասի մի մասը, պարսից շահը, հուսալով ստանալ ռուսական օգնություն, պատրաստակամություն էր հայտնում Ռուսաստանին հանձնել Դերբենտը, Շամախին, Բաքուն։ Այդպիսի առաջարկ նա արել էր իր դեսպանի միջոցով Մոսկվայում, ապա և հաստատել, երբ 1586 թ. Պարսկաստանում էր ռուս դեսպան Վասիլչիկովը։ Վրաց Ալեքսանդր Թագավորը խնդրում էր Ռուսաստանի պաշտպանությունը և շահի հետ միասին պահան-

---

24 ПСРЛ, т. XVIII, էջ 130։

25 Տե՛ս «Казанская история», М., 1954, էջ 154 և հտ. կամ «Казанский летописец», ПСРЛ, т. XIX, էջ 130։

26 Տե՛ս «Историческое описание древнего Российского музея, под названием Мастеровой Оружейной палаты», М., 1807. Տե՛ս նաև «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. II, М., 1838.

27 Տե՛ս Н. М. Карамзин, История государства Российского, т. IX, М., 1903, էջ 65։

28 Տե՛ս «Английские путешественники в Московском государстве в XVI в.», Л., 1937, էջ 211 և հտ.։

չում Թերեքի վրա ամրոց կառուցել և զորք ուղարկել՝ նվաճելու շամխալի երկիրը[29]։

Դ. Ֆլետչերը հիշատակում է, որ 1588 թ. Մոսկվա է եկել Սիոնի պատրիարք Խերոնիմը (Օրեմիան), նպատակ ունենալով համոզել ցարին դաշինքի մեջ մտնել Իսպանիայի հետ՝ Թուրքիայի դեմ պայքարի համար. նույն նպատակով Մոսկվա էին եկել դեսպաններ Վրաստանից։ Նա ընդգծում է, որ այդ բանակցությունները ընթանում էին բարեհաջող, անգամ կազմավորված էր Իսպանիա ուղարկվելիք դեսպանությունը, բայց գործը ձախողվեց՝ Իսպանիայի դեմ մղված պատերազմում Անգլիայի տարած հաղթանակի հետևանքով[30]։ Անդրկովկասի ժողովուրդները այլևս չէին կարող հույսեր կապել օրըստօրե թուլացող Իսպանիայի հետ։

Թուրքիան ու Ղրիմը՝ այդ ժամանակաշրջանի Ռուսաստանի մշտական թշնամիները, շարունակ ասպատակում էին երկիրը, հաճախ հասնելով մինչև Մոսկվա, իսկ 1595 թ. գահ բարձրացած Մահմադ III սուլթանը հարմար առիթի էր սպասում՝ Ռուսաստանին պատերազմ հայտարարելու համար։ Անդրկովկասի ժողովուրդների շահերը օբյեկտիվորեն կապված էին Ռուսաստանի հետ, նրանց սպառնացող վտանգն ընդհանուր էր. և Մոսկվան պետք է դառնար ազատագրական պայքարի դրափիդ, քաղաքական կապերի հանգուցման կենտրոն։ 1588 թ. մինչև XVII դ. սկիզբը գրեթե անընդմեջ բանակցություններ են վարվում Վրաստանի և Ռուսաստանի միջև։

1590 թ. Մոսկվայից ռազմական օգնություն է խնդրում Իբերիայի Ալեքսանդր իշխանը[31]։ Ֆեոդոր Իվանովիչ ցարին ուղարկած հրովարտակում նա գրում է. «Իմ հույսն ու ապավենը աստված է և դու։ Հրամայիր պատերազմել շամխալության դեմ և կումիկումիկների երկրում բերդ կառուցել... այն ժամանակ իմ զորքը կմիանա թագավորական զորքերին»[32]։ 1594 թ. Բորիս Գոդունովը կարգադրել էր Տարկի բերդը գրավել ու ճանապարհ հարթել դեպի Վրաստան, գիտենալով հանդերձ, որ այդ քայլը կրքեր կբորբոքի Թուրքիայում։

Վրացիները և հայերը հույսեր էին կապում հակաթուրքական ուժերի հետ, դիմումներ անում ինչպես արևմտյան երկրներին, այնպես նաև Ռուսաստանին։ 1594—96 թթ. վրաց իշխանի դեսպաններ Խուրշուդը և Արամը ռուս արքունիքից խնդրում են զորք ուղարկել և հպատակեցնել շամխալին։ Նույն այդ ժամանակ վրաց իշխանը և Շահ Աբաս I-ը հակաթուրքական պայքարի կոչով նամակ են ուղարկում Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ին[33]։ Եթե Իսպանիան ոչինչ չարավ և չէր կարող անել, ապա Ռուսաստանը Թուրքիային է դիմում, միջնորդում, որ «իր հպատակներին» չճնշեն և Վրաստան է ուղարկում թնդանոթներ ապա և զորք՝ Բուտուրլինի և Պլեշչեևի ղեկավարությամբ։ Սակայն 1604 թ., խախտելով խաղաղության համաձայնությունը, թուրքական փաշան ուխտադրուժ հարձա-

[29] Տե՛ս Н. М. Карамзин, նշվ. աշխ., հատ. X, էջ 30—31։ Տե՛ս նաև С. Белокуров. Сношения России с Кавказом, СПб., 1889, էջ 562—564։

[30] Տե՛ս Д. Флетчер, О государстве русском, СПб., 1906, էջ 90—91։

[31] Տե՛ս М. Броссе, Переписка на иностранных языках грузинских царей с российскими государями, СПб., 1861, էջ V։

[32] Տե՛ս С. Белокуров, նշվ. աշխ., էջ 264։

[33] Նամակը գրված է հայերեն և վերջանում է այսպես. «Գրեցաւ թուղթս յերկիրն Կուրճեստանի, ի թագաւորանիստ քաղաքն Տփխիս ի թվին հայոց ՌԽԵ, օգոստոս ամսո ԺԴ»։ Հ. Քյուրտյան, Հայ ազատագրական փորձ մը ԺՋ դարուն, տե՛ս «Անահիտ», Փարիզ, 1937, № 5—6։

կում է գործում 7000-անոց ռուս զորքի վրա և շամխալի, կումիկ մուրզաների ու թաթարների օգնությամբ ջարդում Անդրկովկասին օգնության եկած ռուսներին[34]։

Այս մարտական մկրտությունը վերջնականապես հաստատեց այն փաստը, որ Մոսկովյան պետությունը շահագրգռված է և պատրաստ է օգնել Անդրկովկասի ժողովուրդներին՝ նրանց ազատագրական պայքարում։ Սակայն լեհ-շվեդական ինտերվենցիան և Ռուսաստանի ծանր վիճակը խանգարեցին բաղաքական կապերի (ինչպես և առևտրական հարաբերությունների) հետագա զարգացմանը։

Մոսկվայի ազատագրումը լեհական ինտերվենտներից, պետականության վերականգնումը և ապա լեհերի հետ կնքված զինադադարը վերստին աշխուժացրին տնտեսական կյանքը և առևտուրը հարևան երկրների հետ։ Հայերի առևտուրը Մոսկվայի հետ նույնպես սկսեց զարգանալ։ Դեռևս XVI դարից Մոսկվայում՝ Կրեմլի մոտ կար Հայկական առևտրատուն (քարվանսարա)[35]։ Իվան IV-ի տնային ունեցվածքի 1582 թ. ցուցակի մեջ հիշատակվում են մի շարք հայերի անուններ (Ռոմոդանով, Մարտինով, Մուրատով, Սիմոնով, Ամիրև), որոնք արքունիքին վաճառել են ձիեր, թամբեր ու այլ ձիասարքեր[36]։

Դ. Ֆլետչերը, որ 1588 թ. եղել է Ֆեոդոր Իվանովիչ ցարի (1584—1596 թթ.) մոտ, գրում է. «Թուրքական, պարսկական, բուխարական, վրացական, հայկական և քրիստոնեական աշխարհի զանազան արդյունաբերողներ արտահանում են 400—500 հազար ռուբլու մորթեղեն»[37]։

Նույն երկրների վաճառականները Մոսկվա էին տանում մետաքսյա գործվածքներ, արճիճ, թանկագին քարեր[38]։ Հայերը XVII դարում առևտուր էին անում ոչ միայն Մոսկվայում, այլև նրանից հյուսիս գտնվող Մեծ Նովգորոդում[39]։ Բայց հայերը միայն առևտրի համար չէին գնում Մոսկվա։ 1607—1609 թթ. Մոսկվայում է լինում Ավգուստինոս Բաջեցի կաթոլիկ կրոնավորը, որն ինչ-որ նպատակով վրաց սրբայորդի Բագրատի և Հռոմի պապի նվիրակի հետ լինում է Աստրախանում, ապա անցնում է Մոսկվա (որտեղ իրեն ցար էր հռչակել կեղծ Դիմիտրին), այնտեղից էլ Լեհաստան ու Արևմտյան Եվրոպա[40]։

XVII դարի երկրորդ քառորդից սկսած հայերի այցելություններն ու հայ գաղութի աճը Մոսկվայում ավելի նկատելի են դառնում։ 1626 թ. չորս հայ ու երկու ադրբեջանցի վաճառականներ հսկայական արժեքի արևելյան ապրանքներ են տանում Մոսկվա[41]։

1632 թ. Սարգիս Օվանեսովը իր ռուս կնոջ հետ Ղրիմից գալիս է Մոսկվա,

---

34 Տե՛ս С. Белокуров, նշվ. աշխ., էջ CL և հտ.։

35 Պարսկական քարվանսարա կամ առևտրական տուն հիշատակվում է միայն XVII դ., իսկ հայկական՝ 1599 թ. հիշատակվում է «Բելի գորոդում», «Իլյինսկի վորոտայի» մոտ։ Տե՛ս «Акты исторические», т. II, էջ 19։

36 «Аргамак рыж. лыс. кафинца Ромодана Абреимова», «Аргамак сер. армянина Манунловской Мартынова», «Аргамак темносер. армянина Якушевского...». Տե՛ս И. Забелин, Домашний быт русских царей, М., 1915, էջ 846—869։

37 Д. Флетчер, նշվ. աշխ., էջ 111։

38 Նույն տեղում, էջ 51։

39 Տե՛ս «Акты археографической экспедиции», т. I, СПб., 1836, էջ 399։

40 Տե՛ս Ք. Պ., Նշխարք մատենագրության հայոց, ՍՊԲ, 1884։

41 Տե՛ս Центральный гос. архив древних актов (ЦГАДА), фонд 100 (Сношения России с Арменией), 1626 թ. գործ։

խնդրում մշտական բնակության իրավունք, հայտնելով, որ Ղրիմից փախչում է ազգային ու կրոնական ճնշումների պատճառով։ Օվանեսովը աշխատանքի է նշանակվում դեսպանական պրիկազում (արտաքին գործոց ասյան)[42]։ Մի բանի հայեր գալիս են Վրաստանից, մնում Մոսկվայում և հունադավանություն ընդունում (1627 թ.՝ Ռոման Բեգրին, 1634 թ.՝ Շահնազարը[43] և այլն)։ Մոսկվայում են լինում արդեն Նախիջևանի արքեպիսկոպոս դարձած Ավդուստինոս Բաչեցին[44], Անտոնիոսը և շատ ուրիշներ։

Այս ժամանակներում է, որ նոր աշխուժություն է սկսվում հայ ազատագրական շարժման մեջ։ «Վրաց պատմության» հեղինակ Փ. Գորգիջանիձեն հաղորդում է, որ Գանձասարի Պետրոս կաթողիկոսը 1634 թ. վրաց Թեյմուրազ I (1583—1663 թթ.) թագավորին առաջարկում է համատեղ ուժերով գնալ Ատրպատականի վրա և ազատել անգամ Թավրիզը, ընդ որում խոստանում է հայկական 40.000 զորքի օգնություն[45]։ Այս արժեքավոր վկայությունը (40.000 զորքով ապստամբվելու հայերի պատրաստակամության մասին) հաստատվում է նաև այն փաստով, որ Հոլշտինիայի դուքսի դեսպան Օտտո Բրուգեմանը, որը նույն տարիներին վերադարձել էր Պարսկաստանից և 1639 թ. բանակցություններ էր վարում ռուս արքունիքի հետ, նմանօրինակ առաջարկություն է անում Ռուսաստանին և դարձյալ շեշտում 40.000 հոգով կռվի ելնելու հայերի պատրաստակամությունը։ Կրեմլի այդ գաղտնի խորհրդակցությանը մասնակցել են նաև հայեր[46] (Հովհաննեսի որդի Գևորգը և Փիլիպոսի որդի Մարկոսը)։ Հավանաբար այդ տրամադրությունները և Ռուսաստանին գիմելու հանգամանքները բարելավում են հայ-ռուսական հարաբերությունները, և էջմիածնի նվիրակ Ոսկան վարդապետին հաջողվում է թույլտվություն ստանալ Աստրախանում հայկական եկեղեցի կառուցելու համար[47]։ 1637 թ. Մոսկվայից Վրաստան է ուղարկվում Վոլկոնսկու դեսպանությունը, 1638 թ. Մենգրելիայի իշխանը օգնություն է խնդրում Մոսկվայից, իսկ Միխայիլ Ռոմանովի (1613—1645) արքունիքը հայտնում է, որ շահին դրել է, թե Վրաստանը վաղուց ի վեր Ռուսաստանի իշխանության տակ է եղել և որ շահը չհարձակվի իրեն վասալ երկրի վրա[48]։

Արդեն պարզ էր, որ Ռուսաստանի արևելյան բաղաքականության հարցերից մեկն էր դարձել Անդրկովկասի գեթ հովանավորումը և որ հայերն ու վրացիները իրենց ազատագրական պայքարում լուրջ ակնկալություններ ունեին Մոսկվայից, ինչպես և նրան դաշնակից ոչ թուրքական ագրեսիայից տուժող երկրներից։

Պատահական չպետք է համարել ինչպես պաշտոնական դեսպանություններին հանձնարարվող հետախուզական առաջադրանքները և հուսադրություն-

---

42 Նույն տեղում, 1632 թ. գործ։

43 Նույն տեղում, ֆոնդ 1505, 1634 թ. գործ, № 2։

44 А. Олеарий. Описание путешествия в Московию и через Московию в Персию и обратно. СПб., 1906, էջ 82—83։

45 Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Բ, Երևան, 1936, էջ 112։

46 Տե՛ս А. Олеарий, նշվ. աշխ., էջ 66 և 140—143։

47 Տե՛ս «Կովկաս», 1876, № 47։

48 Տե՛ս «Материалы по истории грузино-русских взаимоотношений 1615—1640 гг.», Тбилиси, 1937, էջ 59։

ները, այնպես էլ հայ ու ռուս մարդկանց «անպաշտոն» ուղևորությունները Արևելք։

Դ. Դարանաղցին պատմում է, որ Բաբերդցի Ղազար վարդապետին, որ եկել էր «յՌուսեն և ի Լեհեն լրտես», տեղի իշխանությունները «կալան զնա և էդին ի բանտ մահապարտաց»[49]։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ֆեոդոր Կոտովի ճանապարհորդությունը դեպի Պարսկաստան ու Թուրքիա, որտեղ նրբանկատ ռուսը տեսել է ժողովրդի վիճակը, հասկացել նրանց տրամադրությունները, հանգամանորեն նկարագրել է քաղաքների վիճակը, առևտուրն ու արհեստները[50]։ Հետաքրքիր է, որ Վասիլի Գագարը 1634—1637 թթ. Երուսաղեմ է գնում, անցնելով Թբիլիսիի, Երևանի, Ղարսի, Արդահանի, Էրզրումի վրայով, ապա նկարագրում ճանապարհորդությունը, խոսում Էջմիածնի եկեղեցիների, Երևանի ու Արարատի մասին, առևտրի ու արհեստագործության, ռազմական ու քաղաքական անցքերի մասին[51]։

1652 թ. Մոսկվա է գնում Թեյմուրազը՝ ցարից ռազմական օգնություն խնդրելու, բայց Ալեքսեյ Միխայլովիչը (1645—1676 թթ.) խոստանում է միայն նյութական ու դիվանագիտական օգնություն, քանի որ Ռուսաստանը պայքարում էր Ուկրաինայի համար և նոր բարդություն ստեղծել նաև Պարսկաստանի հետ չէր կարելի։ Թուրքիայի, Ղրիմի և Լեհաստանի դեմ տարիներ մղված պայքարն ու հաղթանակը և Ուկրաինայի վերամիավորումը ավելի ուժեղացրին ակնկալությունները և հավատը Մոսկվայի նկատմամբ։ Սկսվեց մեծ հոսանք դեպի Մոսկվա։

Մոսկվայի հայ բնակչության դերը մեծանում է միայն 1650—1660-ական թթ., երբ ձևավորվում են հայ-ռուսական տնտեսական և քաղաքական կապերը, երբ ռուսական պետությունը վերամիավորելով Ուկրաինան և հաջողությամբ ետ մղելով թուրք-թաթարական հարձակումները, սկսում է ավելի համարձակ արևելյան քաղաքականություն վարել, ավելի մոտիկից զբաղվել Անդրկովկասի հարցերով։ Այդ գիտեին հայերը, որոնք իրենց դիմումների մեջ շեշտում էին Մոսկվայի հետ իրենց կապած հույսերն ու ազատագրական ձգտումները։

Մոսկվայում մշտական բնակություն են հաստատում ոչ միայն առևտրականներ ու արհեստավորներ, այլև մտավորականներ՝ թարգմանիչներ, դիվանագետներ։ Դրանց մի մասը Մոսկվա է փոխադրվում Աստրախանից, Ղրիմից և այլ գաղթավայրերից, մյուսը՝ Հայաստանից ու Անդրկովկասից՝ ռուսական, պարսկական, վրացական դեսպանների հետ։

Մոսկվայում որպես տոլմաչներ (բանավոր թարգմանություն կատարող պաշտոնյաներ) ծառայում էին աստրախանցի Թավաքալովի որդիները՝ Բորիսը և Իվանը, ընդ որում Իվանը հանձնարարություն է ստանում հանդիպել 1654 թ. Պարսկաստան ուղարկված Լոբանով-Ռոստովսկու հետ։ Նույն թվականին այդ դեսպանության հետ Աստրախանից Ռուսաստան է գալիս հայազգի Վասիլի Դաուդովը, որն ընդունվում է դեսպանական պրիկազ և 50 տարի ծառայում, թարգմանչից հասնելով մինչև դեսպանի, վոյեվոդայի պաշտոնների, կա-

---

49 Դրիդոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 409—410։

50 «О ходу в Персидское царство, а из Персиды в Турцию...», МОИДР, т. XV, М., 1852, էջ 1—22։

51 Տե՛ս «Житие и хождение в Ерусалим и Египет В. Я. Гапары. 1634—1637 гг.», СПб., 1891.

տարելով խոշոր ու պատասխանատու դիվանագիտական հանձնարարություններ Թուրքիայում, Ղրիմում, Ուկրաինայում[52]։ Թարգմանիչների պաշտոնում Մոսկվայում ծառայել են նաև հայազգի Վասիլ Իվանովը, Աթանաս Իվանովը և ուրիշներ։ Շերեմետևի հետ Լեհաստանում է եղել հայ թարգման Աֆ. Աֆանասը[53]։ «Մեծ դեսպան» Լոբանով-Ռոստովսկու մոտ ծառայում էր և ուղեկցեց նրան Պարսկաստան (1653—1654 թթ.) Մարկ Արմյանինը[54], իսկ Միշեցկու դեսպանությանն ուղեկցում էր Աֆ. Իվանովը։ XVII դ. 50—60-ական թթ. հիշատակվում են Վասիլի Իվանովը[55], Վ. Թոքմաքչևը[56] և ուրիշներ։

1660 թ. Մոսկվա են գնում Նոր Ջուղայի նշանավոր վաճառականներ խոջա Զաքարն ու իր ինն ընկերները, ցարին տանելով բազմաթիվ պերճանքի ապրանքներ, այդ թվում XVII դ. հայ արվեստի գեղեցիկ գործը՝ նշանավոր ադամանդյա գահը, որ այսօր էլ զարդարում է Կրեմլի Զինապահեստը և ՍՍՀՄ ալմաստի ֆոնդի մեծարժեք նմուշներից մեկն է։

Ինչպես հաղորդում է Զաքարը, գահը գաղտնի պատրաստել են նրա արհեստանոցում հայ վարպետները և գաղտնի էլ տարել Մոսկվա։ Գահի վրա լատիներենով գրված է. «Հզորագույն ու անպարտելի Մոսկովյան կայսր Ալեքսեյին, երկրի վրա բախտավորությամբ թագավորողին՝ մեծագույն արվեստով ու եռանդով պատրաստված այս գահը թող լինի բախտավոր նախանշանակ գալիքի...»[57]։ Գահի «նվեր» տալը և հիշյալ մակագրությունը խոսում են այն մասին, որ սա մի սովորական առևտրական գործարք չէ, որ կատարվում էր։ Հայ վաճառականներն ուզում էին արտահայտել իրենց վերաբերմունքը, հույսն ու հավատը Ռուսաստանի նկատմամբ, միաժամանակ ցույց տալով առևտրի իրենց մեծ հնարավորություններն ու հարստությունը։

Խոջա Զաքարը Մոսկվայի դեսպանական ատյանում ասում է, որ «շահը նրա հորը պարգևներ է տալիս», բայց շահական մեծությունը մուսուլմանություն է դավանում, իսկ իրենք քրիստոնեական դավանանքի մարդիկ են, ուստի ուրախ են աշխատել ու ծառայել մեծ թագավորի համար»[58]։

Խորհրդանշական էր Զաքարի բերած մյուս նվերը՝ պղնձյա թերթի վրա պատկերված «Խորհրդավոր ընթրիք» կոմպոզիցիան, որը շատ դուր է գալիս ցարին և նա հրամայում է Զաքարին դրա նկարչին ուղարկել Մոսկվա։ Ալեքսեյ Միխայլովիչը պահանջում է նաև արքունիքում ծառայելու համար ուղարկել «այլ վարպետներ, Թանկագին քարեր, գաղաններ, թռչուններ... որ խոսում են հնդկերեն»[59]։ Խոջա Զաքարին ռուսական արքունիքն ընդունում է ինչպես դեսպանի, կազմակերպում է պաշտոնական այց Ալեքսեյ Միխայլովիչ ցարի մոտ, Զաքարին տրված տան առաջ կանգնեցվում են ժամապահներ և հանձնարարվում է նրա և նրա մարդկանց հետ վարվել «փաղաքշաբար»։ Դրանից հետո

52 Տե՛ս ЦГАДА, ф. Сношения России с Персией, опись I, дело 1654 г., № 5. Տե՛ս նաև «Акты исторические», т. IV, էջ 184։

53 Տե՛ս Архив Ленинградского отделения института истории АН СССР (ЛОИИ), фонд Астраханской приказной палаты, дело № 4334.

54 «Акты исторические», т. IV, էջ 184։

55 Նույն տեղում, № 5151։

56 Նույն տեղում, էջ 436։

57 Տե՛ս «Собрание актов...», т. I, М., 1833, էջ 64։

58 ЦГАДА, ф. 100 (СРА), дело 1660, թ. 18, հմմտ. «Армяно-русские отношения в XVII в.», Ереван, 1953, էջ 25։

59 Նույն տեղում, թ. 1—5։

ավանդույթ է դառնում դիվանագիտական հանձնարարությամբ Մոսկվա եկածներին, խոշոր վաճառականներին ու կրոնականներին տոն օրերին ցարական պալատ հրավիրելը։

1666 թ. փետրվարին Մոսկվա են հասնում 40 հայեր, որոնք որպես հայկական առևտրական ընկերության ներկայացուցիչներ դեսպանական ատյանում Յուրի Դոլգորուկիի և ապա Օրդին-Նաշչոկինի հետ սկսում են բանակցություններ, որոնք ավարտվում են, 15-ամյա տևողությունից հետո, արքունիքի և հայկական ընկերության միջև առևտրական պայմանագրի կնքումով։ 1667 թ. մայիսի 31-ին պայմանագիրը հաստատվում է և այսպես կոչված «Ջուղայական կոմպանիային» իրավունք է տրվում տարանցիկ առևտուր անել Ասիայի ու Եվրոպայի միջև՝ Աստրախանից վոլգայան մայրուղով մինչև Արխանգելսկ, վճարելով մաքս՝ ապրանքի արժեքի 5 տոկոսի չափով։ Այդ՝ հայ վաճառականությանը տրված շատ մեծ արտոնություն էր, քանի որ տարանցիկ առևտրի իրավունք չէր ստացել ոչ մի պետության վաճառականություն, չնայած դարավոր ու համառ այն ջանքերին, որոնք գործադրվում էին եվրոպական պետությունների կողմից։ Պետք է նշել, որ այդ արտոնյալ ու մենաշնորհ առևտրի իրավունքը տրված էր ոչ թե միայն ջուղայեցիներին, այլ բոլոր հայերին[60]։

Պայմանագիր կնքելու համար Մոսկվա եկած 40 հայերի մեջ կային ինչպես Ջուղայի, այնպես էլ Թբիլիսիի, Շամախիի, Ագուլիսի և այլ քաղաքների վաճառականներ, արհեստավորներ, գործակատարներ և այլք։ Նրանց հետ եկել էր նշանավոր նկարիչ Հոգդան Սալթանովը, որ աշխատանքի է անցնում Կրեմլի Զինապալատում որպես նկարիչ, մեծ դեր կատարում ռուսական գեղանկարչության ու կիրառական արվեստի զարգացման գործում, միաժամանակ նպաստելով հայկական առևտրի զարգացմանը և հայ-ռուսական կապերի ամրապնդմանն ու ծավալմանը։

Ուշագրավ է և այն փաստը, որ Մոսկվա եկած հայերը միայն առևտրական գործերով չեն զբաղվում, այլև հոգում են գաղութների բարգավաճման, արևմտահայերի հետ կապերի ստեղծման, Հայաստանին օգնություն կազմակերպելու մասին։ Նրանց ստորագրությամբ մի մեծածավալ նամակ է ուղարկվում Կ. Պոլսի հայերին, որոնց կոչ է արվում ամեն բանով օգնել Պոլիս մեկնող ռուսական դեսպանությանը, որին գլխավորում էր խոշորագույն քաղաքական գործիչ, դեսպանական ատյանի ղեկավար Ա. Լ. Օրդին-Նաշչոկինը՝ հայերի բարեկամը և հակաթուրքական լիգայի կողմնակիցը։ Նամակի հեղինակները շեշտում են Օրդին-Նաշչոկինի դերը հայերին տրված արտոնությունների ձևակերպման գործում, գովում են նրա բարի կամքն ու մեծ խելքը։ Նրանք գրում են, որ ռուսական կառավարության և Նաշչոկինի ցուցաբերած բարյացակամության որոշ արտահայտությունների մասին բանավոր կհայտնի դեսպանության կազմի մեջ գտնվող հայազգի Վասիլի Դաուդովը։ Նամակագիրները խնդրում են Պոլսի հայերին ամեն բանում և ամեն կերպ օգնել ռուսական դեսպանությանը, դրանով վարձահատույց լինելով հայերին ցույց տված բարեկամության համար։

Հայտնի է, որ 1667 թ. հունվարի 30-ին Օրդին-Նաշչոկինը ստորագրել էր Լեհաստանի հետ կնքված հաշտության Անդրկովկասյան պայմանագիրը, որով

60 Տե՛ս В. Восканян, Ново-торговый устав и договор с Армянской компанией, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 6։

ոչ միայն հաստատվում էր Ուկրաինայի վերամիավորման պատմական ակտը և խաղաղությունը, այլև դաշինք էր ստեղծվում Ռուսաստանի ու Լեհաստանի միջև՝ թուրք-թաթարական ագրեսիայի դեմ համատեղ պայքարի համար։ Հայերը կարող էին արդեն որոշակի հույսեր կապել հակաթուրքական լիգայի հետ, մի հանգամանք, որ ուժեղացնում էր ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը։ Դրան մեծապես նպաստում էր նաև հայերին տրված արտոնագրի ու պայմանագրի տնտեսական ու քաղաքական դերն ու որոշակի հակաթուրքական ուղղվածությունը, քանի որ Ռուսաստանի վրայով կատարվող տարանցիկ առևտուրը թուրքական արքունիքը զրկելու էր այն մեծ մաքսային գանձումներից, որ ստացվում էին Պարսկաստանի մետաքսը Եվրոպա փոխադրելու համար։

Մոսկվա եկած հայերը դիմումներ էին անում արքունիքին, խնդրում բարելավել ճանապարհները ու նրանց անվտանգությունը, կառուցել քարվանսարաներ, շենքեր ու եկեղեցիներ, որտեղ հայերը կարողանային աղոթք անել, մկրտել նորածիններին, թաղել մահացածներին և կամ թույլատրել օգտվել ռուսական եկեղեցիներից։ Մոտ երկու տարի Մոսկվայում ապրած հայ վաճառականները և հատկապես նրանց ղեկավարներ Գրիգոր Լուսիկովը և Ստեփան Ոմոդամսկին զգալի դեր կատարեցին հայ գաղութի կյանքում։ Քիչ անց Մոսկվայում արդեն գործում էր ս. Աստվածածին եկեղեցին[61]։ 1666 թ. ապրիլին Մոսկվայում ստեղծվեց սեկի (սաֆյանի) գործարան, որի վարպետ նշանակվեց սեկագործ Հայրապետ Մարտինովը։ Ինչպես երևում է սեկի գործարանի ստուգումների ժամանակ կազմված մատյաններից[62], դա պարզունակ ու համեստ արհեստանոց էր (որի արտադրությունը կազմակերպված էր նույն սկզբունքներով, ինչ Հայաստանում ու Մերձավոր Արևելքում) և արքունի սեփականություն էր՝ ենթակա նախ գաղտնի գործերի, հետո «մալոռոսիյսկի պրիկազին» և հիմնականում մատակարարում էր արքունիքին։

Մի գրությունից մենք իմանում ենք, որ «Մ. Մառդյասովի և Բ. Իվանովի գործերը՝ 6 կարմիր, 4 մուգ ու 3 կապտագույն և այլ սեկեր հանձնված են գաղտնի գործերի ատյան»[63]։

Սակայն XVII դ. Մոսկվայում դեռևս չկային արդյունաբերության զարգացման բարենպաստ պայմաններ։ Ծանր էր և սեկի ու դամշի արտադրության վիճակը. տեխնիկան պարզունակ էր, արտադրանքի որակը՝ ցածր, ինքնարժեքը՝ բարձր, քիչ էին մասնագետները ու բանվորները, սահմանափակ էր շուկան, ուստի այդ տնայնագործական տիպի արհեստանոցը կարողացավ իր գոյությունը շարունակել միայն 6 տարի և փակվեց, շենքերն ու ողջ ունեցվածքը հանձնվեց «մալոռոսիյսկի պրիկազին»[64]։

Պետք է նշել, որ Մոսկվայում սեկի արտադրության կազմակերպումը ռուսական արքունիքը նախատեսել էր դեռևս 6—7 տարի առաջ, երբ 1660 թ. ցարը խոջա Զաքարին հանձնարարեց վարպետներ ուղարկել։ 1660 թ. Մոսկվա ե-

61 Տե՛ս ЦГАДА, ф. 1252, опись I, д. 382. Տե՛ս նաև Центральный государственный исторический архив в Ленинграде, ф. 880, оп. 5, д. 12, թ. 10։

62 Տե՛ս «Описание записных книг и бумаг дворцовых приказов», 1613—1725 гг.», М., 1883, էջ 568—571։

63 Նույն տեղում, էջ 570։

64 Նույն տեղում։

կած հայերի մեջ էին Հայրապետ Մարտինովը՝ առաջին սեկագործ վարպետը, ինչպես և նրան փոխարինող Մարտին Մարդյասովը։ Նշանավոր նկարիչ Բոգդան Սալթանովը և մի շարք վաճառականներ (Նազար Իվանիսովը, Եղիա Շիրմազանովը) ու վարպետներ դարձան Մոսկվայի մշտական բնակիչներ[65]։

Մեծ դեր էր կատարում մեծատաղանդ ջուղայեցի հայ նկարիչ Բոգդան Սալթանովը՝ Մոսկվայի Կրեմլի Զինապալատի գլխավոր գեղանկարիչը, որը պատրաստեց մոտ 20 ռուս աշակերտներ (դրանցից շատերը դարձան նշանավոր նկարիչներ), զարգացրեց կիրառական արվեստը, ղեկավարեց Կոլոմենսկի հոյաշեն պալատի գեղարվեստական հարդարման գործը, ստեղծեց հարյուրավոր կտավներ, եվրոպականորեն ձևավորեց տոնական Մոսկվան, երբ Պետրոս I-ի հաղթական զորքերը Ազովը նվաճելուց հետո հանդիսավորությամբ պետք է վերադառնային մայրաքաղաք։

Այսպիսով, 1667 թ. պայմանագրի կնքումը և կիրառումը XVII—XVIII դդ. հայ վաճառականների, նրանց գործակատարների, արհեստավորների, դիվանագիտական ծառայողների ու բանագնացների մի զգալի զանգվածի համար Մոսկվան դարձրին ծանոթ ու կարևոր հանգրվան, որի հետ կապված էին տնտեսական և քաղաքական շահեր ու հեռանկարներ։ Այդ տեսակետից հատկանշական է Ստեփան Ռոմադամսկու և հատկապես Գրիգոր Լուսիկովի գործունեությունը Մոսկվայում 1666—1672 թթ.։ Այսպես, իր բանակցությունների ժամանակ Գր. Լուսիկովը համոզում էր արքունիքի ներկայացուցիչներին նպաստել առևտրին, ճանապարհների ապահովության համար Վոլգայի վրա ստեղծել ամրոցներ, իշխաններ, կառուցել ավաններ ու պահեստներ, հրովարտակ ուղարկել լեռնցի իշխաններին, նրանց պարտավորեցնելով բարյացակամորեն վարվել հայ ճանապարհորդների հետ և թույլատրել, որ ցանկացող հայերը կարողանան գալ ու մշտական բնակություն հաստատել ռուսական քաղաքներում։ Լուսիկովը խառնվում էր նույնիսկ արտաքին հարաբերությունների հետ կապված գործերին, խնդրում էր, որ լեհ դեսպանների հետ Լեհաստան մեկնելու հրամանագիր տրվի դոմինիկյան կրոնավորներին (որոնք Պարսկաստանի հետ բանակցություններ էին վարում՝ նրան հակաթուրքական կոալիցիայի մեջ մտցնելու համար), առաջարկում էր, որ Վրաստանի Թեյմուրազ թագավորի թոռ Նիկոլայ Դավիդովիչին թույլատրվի Վրաստան գնալ և այլն[66]։

Զգտելով նպաստել ռուս-պարսկական բարեկամությանը և ցարի ու շահի մտերմությանը, Լուսիկովը արքունիքում խնդրում էր իրեն տալ Ալեքսեյ Միխայլովիչի գիմանկարը՝ շահին ներկայացնելու համար, քանի որ շահը հետաքրքրվել էր ցարի արտաքինով և պահանջել Լուսիկովից՝ նկարագրել, ցույց տալով նրան նման մեկին։ Բայց Լուսիկովն ասում է, որ ինքը Պարսկաստանում չգիտի մեկին, որ նման լինի Ալեքսեյ Միխայլովիչին[67]։

Ստեփան Ռազինի պարսկական արշավանքի (1668—1669 թթ.) կապակցությամբ ռուս-պարսկական հարաբերությունների մեջ սառնություն ստեղծվելու ժամանակներում Լուսիկովը ջանքեր էր թափում շահին համոզելու, որ Ռազինի կասպյան արշավանքը ռուսական արքունիքի դրդմամբ կամ ցանկությամբ չի եղել։ Լուսիկովը ձգտում էր ռուս-պարսկական բանակցությունների

65 Տե՛ս ЦГАДА, ф. 100, дело 1666 г., № 1. թ. 69։
66 Տե՛ս, նույն տեղում, дело 1666—1674 гг., № 2, թ. 231—234։
67 Տե՛ս նույն տեղում, թ. 300—306։

միջոցով հասնել այն բանին, որ վրացական հողերը (մինչև Արաքս) տրվեն Նիկոլայ Դավիդովիչին և խաղաղ ճանապարհով Վրաստանը (և Հայաստանի մի մասը՝ Երևանի խանությունը) դառնա Պարսկաստանից անկախ պետություն։

Այսպես, Գրիգոր Լուսիկովը, որ պաշտոնապես հանդես էր գալիս որպես շահի դեսպան, աշխատում էր նպաստել ռուս-պարսկական հարաբերություններին, ամրապնդել Ռուսաստանի դիրքերը Կովկասում, օգնել հայազգի լեհական դեսպան Բոգդան Գուրդեյին՝ բարելավելու նաև լեհ-պարսկական փոխհարաբերությունները, նպաստելով այդ երեք պետությունների ուժերի միավորմանը՝ Թուրք-Թաթարական ագրեսիային դիմագրավելու համար։ Շահի մոտ Լուսիկովն ասում էր, որ Թուրքիայում եղած ժամանակ ինքը լսել է, թե ինչպես «Թուրքերը մեչետներից գոռում էին «աստված մի արասցե, որ քրիստոնյաները միավորվեն։ Եթե լեհերն ու ռուսները միավորվեն ու բարձրանան, Թուրքիան լիովին կտապալվի»[68]։

Երբ 1660-ական թթ. Լուսիկովը Մոսկվայում ջանքեր էր գործադրում հայ-ռուս-վրաց բարեկամության ամրապնդման համար, Անդրկովկասում խմորվում էր ազատագրական շարժումը։ 1665 թ. վրացական արքայորդու՝ Նիկոլայ Դավիդովիչի դեսպանը միտրոպոլիտ Եպիփանին Մոսկվայում հայտնում է, որ թուլ ու փշալ վրացական ցեղերը, որ համառորեն ու հաջողությամբ կռվում էին իրենց անկախության համար, կողմնորոշված են դեպի Ռուսաստան և ցարին հավատարմության երդում են տվել[69]։

Գանձասարի կաթողիկոս Պետրոսը և Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին դիմումներ են անում ցարին ու նրա դիվանագիտական օգնությունը հայցում։ Էջմիածնի գաղտնի ժողովը 1678 թ. բանագնացներ է ուղարկում Ռուսաստան և Եվրոպա։ Այդ բոլոր անցուդարձերի կենտրոնն է դառնում Մոսկվան, որի նշանակությունը տարեցտարի մեծանում է և XVII դ. վերջին հանրաճանաչ դառնում։ Բավական է նշել, որ 1667—1700 թթ. Մոսկվայում են եղել ավելի քան 300 հայ վաճառականներ ու գործիչներ, մի քանի տասնյակ դիվանագետներ ու բանագնացներ։

1699 թ. Անգեղակոթում հավաքված գաղտնի որոշմամբ հայ ավագանին դիմում է Պետրոս Մեծին, խնդրելով Հայաստանն ազատել օտար լծից[70]։

Համապատասխան հանձնարարականներով ու դիմումներով Եվրոպա են մեկնում ազատագրական շարժման նշանավոր գործիչները՝ մեծատաղանդ ու հեռատես դիվանագետ Իսրայել Օրին և Մինաս Վարդապետ Տիգրանյանը։

1703 թ. Մոսկվայի հայկական եկեղեցուն զանազան նվերներ են տվել մոտ 50 հայեր, որոնց թվում Աբրահամ Ոսկանովը իր ընկերներով՝ 2 շանդան, Մանուկ Վարդանովը, Խարիտոն Տարասովը և Ավետ Մուրադովը՝ 32 զոլոտնիկ քաշով արծաթե խաչ, Ավետ Լազարևը՝ երկու մեծ գեղանկարչական պատկեր (два образа живописные большие), Մանուկ Սուկազովը՝ շանդան, Ալեքսանդր Տեսակովը՝ արծաթե խաչ 35 զոլ., Սաֆար Մելիքովը՝ արծաթե խաչ 80 զոլ., Սաֆար Վասիլևը՝ արծաթե Սերովբե ու Քերովբե (վեցթևանի բարձրաստիճան հրեշտակներ) 80 զոլ., Իվան Պավլովը՝ Նոր Կտակարան, երկու կողմից

68 Նույն տեղում, թ. 142։

69 Տե՛ս М. Броссе, նշվ. աշխ., էջ LXV։

70 Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, Տե՛ս նաև «Армяно-русские отношения в XVIII в.» (сборник документов под редакцией акад. А. Г. Иоаннисяна), Ереван, т. I, 1964, т. II, 1967.

արծաթե կազմով, Ավետ Նլիղարովը՝ շապիկներ և այլն (բոլորն էլ մեծ նվերներ). Մոսկվայում ջրհոր շինելու համար հայազգի Մոսկով Զախարովը նվիրաբերել է իր ժամանակի համար մի մեծ գումար՝ 320 ռ.[71]։

1701 թ. Մոսկվայում էին Ի. Օրին և Մինաս վարդապետը, որոնց գործունեությամբ Մոսկվայի հայ գաղութը դարձավ ռուսահայության գլխավոր կենտրոնը և հայ-ռուսական կապերի հիմնական օղակը։

1701 թ. Օրու հետ էին և Մոսկվայում կարևոր գործեր էին կատարում Գյուլնազար Օրուխենցը (սաղար Օրեխովիչը) և Սիմոնները։ Օրին արքունիք է ներկայացնում 1701 թ. Սիմոնների հետ կազմած հայկական ձեռանկար քարտեզը, այն արքունիքին չէր բավարարել, և Օրին ու Սիմոնները 1703 թ. նոր քարտեզ են կազմում, ավելի մեծ տեղ տալով Հայաստանի սահմանակից երկրներին, որոնք կարող էին այս կամ այն դիրքը բռնել հայերի ապստամբության և ռուս զորքերի երևալու դեպքում։ Նամակում Օրին գրում է. «Արդ... Ձերդ մեծությանն եմ հանձնում մեր երկրի գծագիրը, որի վրա կարելի է տեսնել, թե ինչպես ամբողջ պետության մեջ Երևանից բացի ոչ մի ամրոց չկա։ Երիցս երանելի աստված թող բարեբախտություն տա Ձերդ մեծությանը և ուժ Ձեր զորքերին, որպեսզի նրանք նվաճեն այդ, այնժամ ողջ Հայաստանն ու Վրաստանը կհպատակեցնենք Ձեզ»[72]։

1703 թ. համանման քարտեզ կազմելու պահանջ է ներկայացվել նաև վրաց Արչիլ թագավորին, որն ապրում էր Մոսկվայում և նույն ազատագրական նպատակով գործակցում հայերի հետ[73]։

Վ. Դաուդովը, Միրոն Վասիլևը, Բ. Սալթանովը, Ի. Օրին, Մինաս Վարդապետը, Սաֆար Վասիլևը և Մոսկվայի մյուս հայ գործիչները հսկայական դեր էին կատարում հայերի քաղաքական ու տնտեսական կյանքում, օգնում ազատագրական շարժման ղարթոնքին, կապեր հաստատում Հայաստանի և հայ գաղթավայրերի հետ, մասնակցում զանազան պետությունների միջև վարվող բանակցություններին, միջազգային դրության մասին տեղեկություններ հաղորդում ռուսական արքունիքին, նպաստում Անդրկովկասը թուրք-պարսկական տիրապետությունից ազատելու հարցը եվրոպական պետությունների առջև բարձրացնելու գործին։

АРМЯНЕ В МОСКВЕ В XV—XVII ВЕКАХ

Б. К. ВОСКАНЯН

(Резюме)

Столица русского централизованного государства еще со второй половины XV в. стала играть заметную роль в жизни соседних народов, в том числе грузинского и армянского.

---

71 Տե՛ս Архив внешней политики России, фонд Сношения России с Арменией, дело 1722 г., № 1, թ. 33—34։

72 Г. Эзов, նշվ. աշխ., էջ 173։

73 Տե՛ս Վ. Կ. Ոսկանյան, Իսրայել Օրու կողմից Պետրոս I-ին ներկայացված նորահայտ քարտեզը, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2։

Источники предоставляют ряд важных свидетельств о пребывании в Москве армянских купцов, посланников и гонцов от разных государств и стран—Грузии, Турции, Крыма, Польши. Еще в XV—XVII вв. грузины и армяне связывали определенные надежды с Россией в борьбе против турецкой агрессии. Эта надежда отражается как в дипломатических отношениях ряда стран, так и в прямых обращениях армянских и грузинских политических деятелей к России, в политике русского государства.

Роль Москвы особенно осязательна во второй половине XVII в., когда был заключен торговый договор между русским двором и Армянской компанией (1667 г.), оживились торгово-экономические и политические связи армян с Москвой. Русское правительство предоставило армянам не только торговые права и привилегии, но и разрешение транзитной торговли через Россию между Востоком и Западом. Политические связи с Москвой укрепились, сформировалась русская ориентация армянского освободительного движения. Роль Москвы в экономической, политической и культурной жизни армян особенно возросла в период царствования Петра Великого.